ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2015 թվական N 42–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան փողոց N 15 հասցեում գտնվող զինվորական կոմիսարիատի շենքը և դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը Գյումրի քաղաքի զինվորական կոմիսարիատին անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին» N 157-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) հանել՝
      ա. վերնագրից «ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ» բառերը,
      բ. որոշման 1-ին կետից «և դրա կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 0,222232 (զրո ամբողջ երկու հարյուր քսաներկու հազար երկու հարյուր տասներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Մ. Գաբոյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«25» մարտի 2015 թ.